

«Մինն ի յընտրելոց դասուցն երեւեալ քրիստոսադաւան
Այր հրգօր քաջամարտիկ ճակատուն բազմաց ախոյեան.
Ընդ որ հաւանեալ արքայն եւ գովեաց բազմաց յան-
դիման.

Ապա ակնածէր սիրով միամիտ նորայն քաջութեան.
Կայոյց զնա իշխան երկրի, հանեալ ի պատիւ մեծու-
թեան.

Մեծարդպ փառօք պատուեաց եւ կոչեաց զնա իւր սի-
րական.

Հախնազար հայրըն նորա յորջորջեալ ըզնա սեռական,
Հայկազն անուանէր ըզնա նմանեալ Հայկազնին Տի-
ղրան...

Յաւել քան զնա ի փառս հաւատովն սուրբ Երրորդու-
թեան,

Պերճ հսկայածեւ մարմնով եւ տիօքըն վայելչական...
Իսկ յարութիւն անձինն յոյժ անքատակ ի յորդիս
մարդկան.

Եւ անհամեմատ խոհեմ ի շարժել շրթանցն յատկական.
Ճարտասան արադախօս անթարթափ յարտաբերու-
թեան.

Եւ բաղխոհական ոճով բարբառէր յարքայից դիւան:
Իսկ ներքին մասամբ հոգւոյն երկիւղած եւ զգաստական
Խոնարհ էր եւ հեզ բարուք եւ սիրող աստուածաշա-
տութեան.

Անապատի սիւն լինէր եւ գրբգէր գթով հայրական.
Մինչ յիշխանութեան միջին՝ ջանք դընէր անապատա-
կան...»:

1611ին, երբ Սիւնեաց աշխարհը հասան
երկու «կամաւոր աղքատները», Մելիք Հայ-
կազն անոնց պատսպարանն եղաւ, չնորհեց
անոնց ամէն դիւրութիւն, նիւթական եւ բա-
րոյական, եւ ինչպէս Մոկացին կ'ըսէր, «ա-
նապատի սիւն լինէր եւ գրբգէր գրթով հայ-
րական»:

1614ին կը հանդիպինք Մելիք Հայկազ-